ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՅՈՒՔՈՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան 0015, Սուրբ Գր. Լուսավորիչ 9

հեռ. (+374 11) 400 400, էլ. փոստ՝ info@ucom.am

Ինտերնետային կայք՝ www.ucom.am

Հաշվետվություն թիվ 1, 20.01.2020թ.

Սույնով տեղեկացնում ենք, որ «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ «Յուքոմ») բանակցություններ է վարում «Վեոն Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Վեոն Արմենիա») հետ՝ վերջինիս բաժնետոմսերի 100%-ը ձեռքբերելու հնարավոր գործարքի հետ կապված: Ելնելով ՀՀ գործող օրենսդրության պահանջներից, վերոնշյալ գործարքի կնքումը թույլատրելու համար՝ Յուքոմ-ը և Վեոն Արմենիա-ն դիմել են ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով (ՏՄՊՊՀ), իսկ Վեոն Արմենիա-ն դիմում է ներկայացրել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (ՀԾԿՀ):

Առաջարկվող գործարքի վերաբերյալ ՏՄՊՊՀ թույլտվությունը և ՀԾԿՀ համաձայնությունը ստանալու դեպքում Կողմերը մտադիր են բանակցել գործարքի փաստաթղթերը, ստանալ կորպորատիվ հաստատումներ և իրականացնել մի շարք այլ գործընթացներ, որոնց արդյունքում Յուքոմ-ի համար հնարավոր կլինի կամ հնարավոր չի լինի Վեոն Արմենիա-ի բաժնետոմսերի 100%-ի ձեռքբերումը: Հայաստանի Հանրապետությունում ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան՝ Յուքոմ-ը կտրամադրի թարմացված տեղեկատվություն՝ դրա առկայության դեպքում: